

Գլուխ տասներկու

1916 թվականի ամռան կես էր, երբ մեր խմբի աշխատանքը ինտենսիվ առաջ էր գնում: Գ.-ն հիմնականում Սանկտ Պետերբուրգում էր մնում և միայն մի քանի օրով էր գնում Մոսկվա՝ վերադառնալով Մոսկվայի իր երկու կամ երեք աշակերտների հետ: Մեր դասերը և հանդիպումները այլևս պաշտոնական բնույթ չէին կրում: Բոլորս արդեն իրար ավելի լավ էինք ճանաչում և չնայած կային որոշ տարակարծություններ, մենք ներկայացնում էինք մեկ միասնական փոքրիկ խումբ, որին միավորում էր նոր մտքեր լսելու և սովորելու հետաքրքրությունը, նաև մեր ստացած գիտելիքների ընձեռած նոր հնարավորությունները: Մեր խումբը բաղկացած էր մոտ երեսուն հոգուց: Մենք հանդիպում էինք գրեթե ամեն երեկո: Մոսկվայից վերադառնալիս Գ.-ն հաճախակի էքսկուրսիաներ էր կազմակերպում, մեծ խնջույքներ քաղաքից դուրս, որտեղ մենք խորոված էինք պատրաստում, որը շատ անսովոր էր Պետերբուրգի առօրյայի համար: Մեր ճամփորդություններից ինձ մոտ տպավորվել է դեպի Նևա գետի վերին մասում գտնվող Օստրովսկի վայրը հատկապես նրա համար, որ ես այդ ժամանակ հասկացա, թե ինչու է Գ.-ն կազմակերպում առաջին հայացքից անիմաստ թվացող խրախճանքները: Ես հասկացա, որ նա ամբողջ ժամանակ հետևում էր բոլորին, և մեզնից շատերի մոտ այնպիսի գծեր էր հայտնաբերում, որոնք երբեք չէին բացահայտվել Պետերբուրգյան պաշտոնական հանդիպումների ժամանակ:

Գ.-ի Մոսկվայի աշակերտների հետ իմ հանդիպումները ընդհանրապես նման չէին նախորդ տարվա զարնանը կայացած մեր առաջին հանդիպումներին: Նրանք ինձ այլևս արհեստական չէին թվում կամ թվում էր, թե յուրաքանչյուրը իր սովորած դերն է տանում: Հակառակը, ես միշտ անհամբեր սպասում էի, թե երբ է խումբը գալու Մոսկվայից, որպեսզի հարցնեի այնտեղի գործունեությունից, թե ինչ է Գ.-ն ասել նրանց, որ մենք չգիտենք: Ես նրանցից շատ բան սովորեցի, որը ինձ հետագայում շատ օգնեց: Նրանց հետ զրուցելիս ես զգացի այդ ծրագրի զարգացման ընթացքը: Մենք ոչ միայն Գ.-ից էինք սովորում, այլև մեկս մյուսից: Ես սկսում էի Գ.-ի խմբերը նմանացնել միջնադարյան մի նկարչի նկարչական դպրոցի, ում աշակերտները ապրում և աշխատում էին նրա հետ և նկարչից սովորելով՝ սովորեցնում էին մեկը մյուսին: Միևնույն ժամանակ ես հասկացա, թե ինչու Գ.-ի Մոսկվայի ուսանողները չկարողացան պատասխանել իմ հարցերին, երբ մենք առաջին անգամ հանդիպեցինք: Ես հասկացա, թե ինչքան միամիտ հարցեր եմ նրանց տվել՝ “Ինչի՞ վրա է հիմնված իրենց կատարած աշխատանքը, ինչի՞ց է բաղկացած իրենց ուսուցման համակարգը, ո՞րն է այդ համակարգի սկզբնաղբյուրը” և այլն:

Այժմ ես հասկանում էի, որ այս հարցերին հնարավոր չէ պատասխանել: Պետք է նախ և առաջ սովորել դրանք հասկանալու համար: Գրեթե մի տարի առաջ ես մտածում էի, որ իրավունք ունեմ այդպիսի հարցեր տալու ճիշտ այնպես, ինչպես որ նորեկներն են անում, երբ գալիս են խմբակ, և զարմանում, թե ինչու մենք չենք պատասխանում իրենց հարցերին և կարծում էին, թե մեր մեջ ինչ-որ արհեստական բան կա կամ էլ մենք նույնպես ինչ-որ դեր ենք խաղում:

Այնուամենայնիվ, նոր մարդկանց մենք միայն հանդիպում էին մեծ հանդիպումների ժամանակ, որոնց Գ.-ն նույնպես ներկա է գտնվում: Իսկական խմբի հավաքները այդ ժամանակ առանձին էին կազմակերպվում, և միանգամայն պարզ էր, թե ինչու էր այդպես: Մենք արդեն սկսում էինք ձերբազատվել ինքնահավանությունից և արդեն գիտեինք

մարդկանց՝ մոտեցումն աշխատանքին և արդեն կարող էինք Գ.-ին հասկանալ ավելի լավ քան առաջ: Բայց ընդհանուր ժողովների ժամանակ շատ հետաքրքիր էր լսել նոր մարդկանց և նրանց տված հարցերը, որ մենք ինքներս էինք տալիս սկզբում և թե ինչպես նրանք չէին կարող հասկանալ ամենահասարակ բաները, որոնք մենք նույնպես չէինք հասկանում: Նոր մարդկանց հետ հանդիպումները մեզ մոտ ինքնագոհունակություն էր առաջացնում: Իսկ երբ մենք Գ.-ի հետ էինք, նա մեկ բառով վերացնում էր այն ամենը, ինչ մենք իբրև կառուցել էինք մեր մեջ և ստիպում էր մեզ տեսնել, որ իրականում մենք դեռ ոչինչ չգիտենք և ոչինչ չենք հասկանում ո՛չ մեր մեջ և ո՛չ էլ մյուսների:

“Ամբողջ խնդիրն այն է, որ դուք կարծում եք, թե միշտ նույնն եք: Բայց ես ձեզ միանգամայն տարբեր եմ տեսնում: Օրինակ՝ այսօր տեսնում եմ մեկ Ուսպենսկի, մինչդեռ երեկ մեկ այլ Ուսպենսկի էր: Կամ բժիշկը. նախքան ձեր գալը մենք նստած խոսում էինք: Դա մի սովորական բժիշկ էր: Այնուհետև դուք եկաք և ես նկատեցի, որ այնտեղ միանգամայն այլ բժիշկ էր նստած: Եվ այն բժշկին, որ ես եմ տեսնում, դուք շատ հազվադեպ եք տեսնում:

Պետք է հասկանաք, որ յուրաքանչյուր մարդ ամենօրյա տարբեր իրավիճակներում իր խաղացած դերերի խաղացանկն ունի: Նա ամեն իրավիճակի համար իր դերն ունի, որը խաղում է ամեն անգամ, բայց եթե ինքը հայտնվի իր իմացած իրավիճակներից մի փոքր տարբեր իրավիճակում, ապա նա մի պահ չի կարողանա դրա համար հարմար դեր գտնել և ցույց կտա իր իրական պատկերը: Դերերի ուսումնասիրությունը ինքնաբացահայտման մի շատ կարևոր մաս է կազմում: Յուրաքանչյուր մարդու խաղացանքը շատ համառոտ է և եթե մարդն ասի “ես” կամ “Իվան Իվանովիչ”, դա չի կարող արտացոլել իր ողջ էությունը, քանի որ մեկ “Իվան Իվանովիչ” չկա, այլ կա նվազագույնը հինգ-վեց “Իվան Իվանովիչ”: Մեկ կամ երկու “Իվան Իվանովիչ” կա ընտանիքի համար, մեկ կամ երկուսը՝ աշխատանքի համար (մեկը՝ իր ենթակաների և մեկն էլ՝ ղեկավարների համար), մեկը՝ ռեստորաններում իր ընկերների համար և հավանաբար նաև մեկը, ում հետաքրքրում է վերին գաղափարները և սիրում է ինտելեկտուալ գրույցներ ունենալ: Յուրաքանչյուր պահին մարդն իրեն դրսևորում է այս դերերից մեկի մեջ և այն նրա անբաժան մասն է կազմում: Այս դերերը տեսնելը, իր խաղացանկը իմանալը, մասնավորապես դրա շատ սահմանափակ լինելու հանգամանքը գիտակցելը շատ բան է նշանակում: Բայց խնդիրն այն է, որ երբ մարդ հայտնվում է իր խաղացանկից դուրս որևէ իրավիճակում, նա իրեն շատ անհարմար է զգում և որևէ բան է պետք, որ իրեն գոնե ժամանակավորապես դուրս հանի այդ ուղուց և նա ամեն ինչ անում է, որպեսզի վերադառնա իր հին դերերից մեկին: Հենց որ նա նորից ընկում է իր իմացած ուղու վրա, ամեն ինչ նորից սկսում է հարթ ընթանալ և տհաճության ու անհարմարավետության զգացումը անհետանում է: Ահա թե ինչպես է իրական կյանքում, բայց իր վրա աշխատելիս մարդը պետք է համակերպվի այդ ճնշմանը, անհարմարավետությանը և անօգնական լինելու փաստին: Միայն այս անհարմարավետության միջով անցնելիս մարդն ի վիճակի է իրեն հետագոտել և պարզ է, թե ինչու է դա այդպես: Երբ մարդն իր հիմնական դերերից մեկը չի խաղում, երբ չի կարող տվյալ իրավիճակին հարմար դեր գտնել իր խաղացանկից, նա կարծես իրեն մերկացած է զգում: Նա դողում է և ամաչում և ուզում է փախչել բոլորից: Սակայն հարց է ծագում. ի՞նչ է նա զանկանում՝ հանգիստ կյանք թե իր վրա աշխատել: Եթե նրան հանգիստ կյանք է հարկավոր, ապա նա այլևս երբեք չպետք է իր խաղացանկից շեղվի: Իր ամենօրյա դերերը խաղալիս նա իրեն հարմար է զգում և հանգիստ: Իսկ եթե նա ուզում է աշխատել իր վրա, ապա նա պետք է վերացնի այդ հանգիստը: Միաժամանակ երկուսն է ունենալ անհնար

է, դրա համար մարդ պետք է ընտրություն կատարի, սակայն ընտրություն կատարելն էլ շատ խաբուսիկ է, այսինքն մարդը նույնիսկ այս դեպքում փորձում է խաբել ինքն իրեն: Նա ընտրում է աշխատելը, սակայն իրականում նա չի ուզում իր հանգիստը կորցնել: Արդյունքում հայտնվում է երկընտրանքի մեջ: Սա ամենաանհարմար բանն է: Նա ընդհանրապես չի աշխատում և չի էլ կարողանում հանգստանալ, իսկ որոշել ամեն ինչ դեն նետել և իսկապես սկսել աշխատել շատ բարդ է: Իսկ ինչո՞ւ է դա այդքան բարդ: Որովհետև իր կյանքը չափազանց հեշտ է, նույնիսկ եթե նա այն վատն է համարում, նա արդեն վարժվել է դրան: Թեկուզ և այն վատն է, այդ իրավիճակը նրան ծանոթ է: Բայց սա նրան միանգամայն անծանոթ իրավիճակ է և նա նույնիսկ չգիտի, թե դրանից ինչ արդյունք է ստանալու, իսկ ամենաբարդն այն է, որ նա պետք է ենթարկվի որևէ մեկին, կախում ունենա մեկից: Եթե մարդն իր համար դժվարություններ և գոհողություններ չստեղծեր, նա կարող էր շատ հեռու գնալ, բայց խնդիրն այն է, որ դա անհնար է: Անհրաժեշտ է մեկին ենթարկվել կամ հետևել աշխատանքի հիմնական ուղղությանը, որը ղեկավարվում է մեկ անձի կողմից: Դրան համակերպվելը ամենաբարդ բանն է այն մարդու համար, ով կարծում է, որ ինքն ի վիճակի է ինքնուրույն որոշում կայացնել և ինչ-որ բան անել: Իհարկե, եթե նա ձեռքագաստվի իր երևակայություններից և տեսնի իր իրական պատկերը, դժվարությունները կվերանան: Այնուամենայնիվ, դա հնարավոր է միայն աշխատանքի արդյունքում: Բայց սկսել աշխատելը և հատկապես շարունակել աշխատանքը բավականին բարդ է, որովհետև կյանքը շատ հարթ է ընթանում:

Մի առիթով խմբի աշխատանքի մասին խոսելիս Գ.-ն ասեց.

“Հետագայում դուք կտեսնեք, որ յուրաքանչյուրիդ տրված առաջադրանքը ուղղված է ձեր հիմնական սխալի կամ թերության դեմ, այսինքն դա մի առաջադրանք է, որը կօգնի ձեզ ավելի արդյունավետ պայքարել ձեր իսկ սխալի դեմ: Անհատական առաջադրանքներից բացի կան նաև ընդհանուր առաջադրանքեր, որոնք տրվում են ամբողջ խմբին և որը կատարելու կամ չկատարելու համար ամբողջ խումբն է պատասխանատվություն կրում, չնայած խումբը նաև պատասխանատու է որոշ անհատական առաջադրանքների համար: Նախ և առաջ եկեք անդրադառնանք ընդհանուր առաջադրանքներին: Մինչ այժմ դուք պետք է որ որոշ չափով հասկանաք այս համակարգի բնույթը և հիմնական մեթոդները և պետք է որ կարողանաք դրանք հաղորդել ուրիշներին: Դուք հիշում եք, որ սկզբում ես դեմ էի, որ այդ գաղափարները խմբերից դուրս արձարծվեին: Ավելին՝ հստակ օրենք կար, որ իմ հանձնարարած մարդկանցից ոչ մեկը իրավունք չուներ խմբակի և դասերի շրջանակներից դուրս խոսել դրանց մասին և ես բացատրեցի դրա իմաստը: Դուք չէիք կարողանա դրանք ճիշտ լուսաբանել: Փոխանակ մարդկանց օգնեիք այդ մտքերին գալու, դուք նրանց կվանեիք դրանցից և նույնիսկ կգրկեիք նրանց որևէ հնարավորությունից հետագայում դրանց անդրադառնալու համար: Այժմ իրավիճակն այլ է: Դուք արդեն բավակաչափ լսել եք և եթե դուք բավականին ջանք եք գործադրել հասկանալու այն, ինչ լսել եք, դուք պետք է որ ի վիճակի լինեք հաղորդել այդ մտքերը մյուսներին: Այսպիսով, ես ձեզ առաջադրանք եմ տալիս: Փորձեք գրուցել ձեր ընկերների և ծանոթների հետ այս թեմաներից, նախապատրաստեք նրանց, որքեր հետաքրքրվում են, և ցանկության դեպքում բերեք նրանց մեր հանդիպումներին: Յուրաքանչյուրը պետք է հասկանա, որ սա իր առաջադրանքն է և մի ակնկալեք, որ ուրիշները այն անեն ձեր փոխարեն: Այս առաջադրանքի պատշաճ կատարումը նախ և առաջ ցույց կտա, որ դուք արդեն սովորել և հասկացել եք որոշ բաներ և

հետո դուք կսովորեք ճիշտ գնահատել մարդկանց, կհասկանաք՝ ում հետ արժե խոսել և ում հետ ոչ, քանի որ մարդկանցից շատերը ի վիճակի չեն ընկալել այս գաղափարները և իրենց հետ պարզապես անիմաստ է խոսելը: Մակայն կան մարդիկ, ովքեր կարող են հասկանալ այս գաղափարները, և նրանց հետ արժե խոսել”:

Մրա հաջորդ առավոտը շատ հետաքրքիր էր: Բոլորը լի էին տպավորություններով իրենց ընկերների հետ խոսելուց հետո: Բոլորի մոտ շատ ու շատ հարցեր էին գոյացել և բոլորն էլ կարծես մի փոքր հուսալքված և հիասթափված լինեին:

Պարզվում է, որ բոլորի ընկերները շատ սուր հարցեր էին տվել, որոնց պատասխանը իրենք չունեին: Օրինակ՝ նրանք հարցրել էին, թե ինչ է այդ աշխատանքը իրենց տալիս և կասկածամտորեն էին մոտեցել “ինքներս մեզ հիշելու” հարցին: Մյուսները կարծում էին, որ “ստեղծման աղբյուրի” և “յուր կոսմոսների” մասին մտքերը պարզապես ծիծաղելի են և անօգուտ: “Իսկ աշխարհագրությունը ի՞նչ կապ ունի սրա հետ”, հեզմանքով հարցրեց ընկերներիցս մեկը՝ մեջբերելով դրանից առաջ կայացած ներկայացումից այդ տողը: Մյուսները հարցնում էին, թե կա՞ որևէ մեկը, ով տեսել է այդ կենտրոնները և ինչպես կարելի է դրանք տեսնել: Մյուսները անիրական էին համարում այն միտքը որ մենք չենք կարող “անել”: Որոշ մարդիկ էստերիցիզմի գաղափարը համարում էին “հետաքրքիր, բայց ոչ համոզիչ”, իսկ մյուսները այս մտքերը համարում էին “նոր հայտնագործություններ”: Որոշ մարդիկ պատրաստ չէին ընդունել իրենց՝ ոչ կապիկից առաջացած լինելու փաստը, իսկ որոշ մարդիկ ասում էին որ այդ մտքերում չկա ոչինչ “սեր դեպի մարդկությունը” թեմայով: Մյուսները ասում էին, որ մեր մտքերը շատ խորը մատերիալիստական են, որ մենք ուզում ենք մարդկանց մեքենաներ դարձնել, իդեալիզմի և հրաշալիի մասին մտքերը բացակայում են և այլն:

Գ.-ն ժպտաց, երբ մենք իրեն պատմեցինք մեր ընկերների հետ ունեցած զրույցների մասին:

“Դա դեռ ոչինչ է: Եթե այն ամենը, ինչ մարդիկ ասում են մեր համակարգի մասին, միասին վերցնեիք, նույնիսկ դուք ինքներդ չէիք հավատա դրան: Այս համակարգը մի շատ հետաքրքիր հատկություն ունի. իր հետ նույնիսկ մի չնչին շփումը կամ ծայրահեղ լավ կամ էլ ծայրահեղ վատ ազդեցություն է թողնում մարդկանց վրա: Դուք կարող է ճանաչել մեկին, ով այդքան էլ վատ մարդ չէ և ձեր կարծիքով բավականին խելացի է: Փորձեք խոսել նրա հետ այս մտքերից և դուք անմիջապես կտեսնեք, որ նա միանգամայն այնխելք է: Մեկ ուրիշը կարող է բացարձակապես անխելք թվալ, բայց փորձեք խոսել նրա հետ և կտեսնեք որ նա կարող է մտածել և բավականին էլ լավ է մտածում”:

Աշակերտներից մեկը հարցրեց, թե ինչպես կարելի է ճանաչել նրանց, ովքեր կարող են գալ աշխատելու:

“Իրենց ճանաչելը մեկ այլ հարց է: Այն անելու համար հարկավոր է որոշ չափով “լինել”։ Նախքան սրա մասին մանրամասն խոսելը մենք պետք է պարզենք, թե ինչ տիպի մարդիկ կարող են գալ և աշխատել և ովքեր չեն կարող:

Նախքան գալը, մարդը առաջին հերթին պետք է որոշ չափով պատրաստված լինի դրան, որոշակի գիտելիք ունենա: Նա գոնե հնարավորինս պետք է գաղափար ունենա էստերիցիզմի մասին, անտեսանելի գիտելիքների, մարդու ներքին զարգացման հնարավորությունների և այլն, այսինքն այս մտքերը չպետք է իրեն ամբողջովին նոր թվան:

Այդ դեպքում շատ դժվար կլինի նրա հետ խոսելը: Եթե մարդ լավ գիտելիքներ ունի կրոնից, սա նույնպես կարող է օգտակար լինել: Բայց եթե նա սերտորեն կապված է կրոնի կրոնական գաղափարների հետ և պատկերացում չի կազմում դրանց էության մասին, դա նրա իր համար շատ դժվար կլինի: Ընդհանուր առմամբ, եթե մարդն այդքան էլ գիտակ չէ, քիչ է կարողացել և քիչ է մտածում, շատ բարդ է նրա հետ խոսելը: Իսկ եթե նա էությանը լավն է, մեկ այլ ճանապարհ կա իր հետ աշխատելու, բայց այս դեպքում նա պետք է ուժ գտնի հնազանդ լինելու և իր կամքը չթելադրելու համար և նա ինչ-որ կերպ պետք է հասնի դրան: Կարելի է ասել, որ գոյություն ունի մեկ հիմնական օրենք բոլորի համար: Այս համակարգին լրջորեն մոտենալու համար մարդիկ պետք է հիասթափվեն նախ և առաջ իրենք իրենցից, այսինքն՝ իրենց հնարավորություններից, և երկրորդը՝ հին մեթոդներից: Մարդը չի կարող զգալ, թե որն է ամենակարևորը համակարգում, մինչև նա չհիասթափվի այն ամենից, ինչ նա անում էր և ինչը փնտրում էր: Եթե նա գիտնական է, նա պետք է հիասթափվի գիտությունից: Եթե նա հավատացյալ է, նա պետք է հիասթափվի կրոնից: Եթե նա քաղաքական գործիչ է, նա պետք է հիասթափվի քաղաքականությունից, եթե փիլիսոփա է՝ փիլիսոփայությունից, թեոսոֆիստը՝ թեոսոֆիզմից, օկուլիստը՝ օկուլիզմից և այլն: Բայց սա պետք է ճիշտ հասկանալ, թե սա ինչ է նշանակում: Եթե ես ասում եմ, որ հավատացյալը պետք է հիասթափվի կրոնից, սա չի նշանակում, որ նա պետք է կորցնի իր հավատը: Ընդհակառակը՝ դա նշանակում է հիասթափվել միայն այն սովորելուց և դրա մեթոդներից՝ գիտակցելով, որ իր ստացած կրոնական ուսումը չի կարող ոչնչի հասցնել:

Բոլոր կրոնական ուսմունքները, բացառությամբ ամբողջությամբ դեգեներացված վայրենիների կրոնները, հորինված կրոնները և ժամանակակալից աղանդները, բաղկացած են երկու մասից՝ տեսանելի և թաքնված: Կրոնից հիասթափվել նշանակում է հիասթափվել նրա տեսանելի մասից և փորձել գտնել չբացահայտված, անտեսանելի մասը: Գիտությունից հիասթափվել չի նշանակում հետաքրքրությունը կորցնել գիտության հանդեպ, այլ՝ հավատալով, որ սովորական գիտական մեթոդները ոչ միայն անօգուտ են, այլ նաև զարգացրած տեսությունները իրարամերժ են, և փորձել բացահայտել այլ մեթոդներ և տեսություններ: Փիլիսոփայությունից հիասթափվել նշանակում է՝ հավատալ, որ ներկայիս փիլիսոփայությունը պարզապես “ջուր է ծեծում” և որ մարդիկ նույնիսկ չգիտեն, թե ինչ է փիլիսոփայությունը, չնայած որ իսկական փիլիսոփայություն կարող է լինել և պետք է գոյություն ունենա: Օկուլտիզմից հիասթափվել չի նշանակում դադարել հավատալ հրաշքներին, այլ հավատալ, որ ժամանակակալից հասանելի կամ գովազդվող օկուլտիզմը, ինչ անվան տակ էլ, որ այն անցնի խաբեություն և ինքնախաբեություն է, և չնայած ինչ-որ բան ինչ որ տեղ գոյություն ունի, այն ամենը, ինչ մարդ կարող է սովորել սովորական ճանապարհով դեռ բավական չէ:

Այսպիսով, անկախ նրանից, թե ինչ է նա նախկինում արել, ինչով է հետաքրքրվել, եթե նա հասնում է այն վիճակին, որ հիասթափվում է այդ ամենից վերը նշված ձևերով, այդ ժամանակ արժե իր հետ խոսել մեր համակարգից և այնուհետև նա կարող է գալ մեր աշխատանքներին մասնակցելու: Իսկ եթե նա շարունակում է մտածել, որ կարող է որևէ նոր բան բացահայտել այն հին ճանապարհով, կամ եթե նա կարծում է, որ դեռ բոլոր ճանապարհները չի փորձել, կամ նա կարող է ինքնուրույն գտնել, անել որևէ բան, նշանակում է, որ նա դեռ պատրաստ չէ: Ես չեմ ասում, որ նա պետք է միանգամից դեն նետի այն ամենն, ինչով որ զբաղվում էր: Դրա կարիքը ամենևին էլ չկա: Ընհակառակը, շատ ավելի լավ է, եթե նա

շարունակի անել այն, ինչ անում է, բայց նա պետք է գիտակցի, որ դա զուտ մասնագիտություն է, կամ զբաղմունք, կամ անհրաժեշտություն: Այս դեպքում արդեն ուրիշ է: Նա ի վիճակի կլինի “անուններէ չկայցնել”:

Միայն մեկ բան կա, որը անհամատեղելի է աշխատանքի հետ և դա “պրոֆեսիոնալ օկուլտիզմն” է, այլ կերպ ասաց պրոֆեսիոնալ խաբեությունը: Բոլոր հավատացյալները, հեքիմները, պայծառատեսները և նման այլ մարդիկ մեզ ոչ մի օգուտ չեն կարող տալ: Պետք է հիշել, որ նման մարդկանց հետ չարժեքն արկել մեր աշխատանքը, որովհետև ձեզնից սովորածը նրանք կարող են ծառայեցնել իրենց նպատակներին, այսինքն՝ մարդկանց խաբելու համար:

Կան նաև այլ կատեգորիաներ, որոնք նույնպես մեզ օգուտ չեն տա, բայց մենք դրանց հետո կանդրադառնանք: Միևնույն ժամանակ պետք է հիշել մեկ բան. մարդը պետք է հիասթափված լինի սովորական ուղիներից և պետք է կարողանա ընդունել այն միտքը, որ ինչ-որ ֆի բան ինչ-որ տեղ գոյություն ունի: Եթե դուք խոսեք նման մարդու հետ, նա կարող է ձեր ասածների մեջ ճշմարտության հոտը առնել, ինչքան էլ դուք անհասկանալի խոսեք: Իսկ եթե դուք խոսեք մեկի հետ, ով հավատում է մեկ այլ բանի, ձեր բոլոր ասածները իրեն վերացական կթվան և նա այդպես էլ ձեզ լրջորեն չի ընկալի: Նրա վրա ժամանակ պետք չէ վատնել: Այս համակարգը նրանց համար է, ովքեր արդեն իրենց գտել և այրել են: Նրանք, ովքեր դեռ չեն գտել իրենց և չեն էլ ցանկանում փնտրել, սրա կարիքը չունեն: Նրանք, ովքեր դեռ իրենց չեն այրել նույնպես սրա կարիքը չունեն:

- Իսկ մարդիկ այլ հարցեր են տալիս, - ասեց խմբի անդամներից մեկը, - նրանք հարցնում են, թե արդյո՞ք մենք ընդունում ենք դրախտի գոյությունը, ինչպե՞ս ենք վերաբերվում էվոլյուցիային, ինչո՞ւ չենք հավատում առաջընթացին, կամ թե ինչո՞ւ մենք չենք կարծում, որ մարդիկ կարող են իրենց կյանքը կազմակերպել հավասարության և համատեղ բարօրության մտքի վրա հիմնված, և այլն:

- Բոլորն էլ լավ հարցեր են, - ասեց Գ.-ն, - և դու կարող ես դրանցից յուրաքանչյուրին էլ պատասխանել, եթե իհարկե, այն ազնիվ է: Ես ի նկատի ունեմ՝ այդ բոլոր հարցերը դրախտի, առաջընթացի կամ համատեղ բարօրության մասին մարդիկ կարող են հարցնել պարզապես հարցնելու համար, կամ էլ որովհետև մեկ ուրիշն էլ է հարցրել այդ մասին, կամ էլ նա կարդացել է որևէ գրքում, մյուս կողմից էլ հնարավոր է, որ նա այդ հարցը տալիս է, որովհետև այն իրեն իսկապես մտահոգում է: Եթե այդ հարցը իրեն իսկապես մտահոգում է, դու իր հարցին կարող ես պատասխանել և իրեն նույնիսկ բերել մեր համակարգ այդ հարցի պատասխանը տալու համար: Բայց դա կարող ես անել միայն այն ժամանակ, երբ այդ հարցը իրոք նրան մտահոգում է:

Մեր գրույցները այն մարդկանց մասին, ովքեր կարող են հետաքրքրվել մեր համակարգով և կարող են աշխատել մեզ հետ, բերեցին մեզ նրան, որ մենք սկսեցինք մեր ընկերներին գնահատել միանգամայն այլ տեսանկյունից: Այս առումով մենք բոլորս էլ խորը հիասթափություն ապրեցինք: Նույնիսկ նախքան Գ.-ի հանձնարարելը, որ գնանք և խոսենք մեր ընկերների հետ համակարգի մասին, մենք փորձեր արել էինք գոնե մի կերպ խոսել մեր ընկերների հետ, ում ավելի շատ էինք հանդիպում, և մեծամասնությամբ համակարգի մասին մեր մտքերը շատ սառնությամբ էին ընդունվում: Նրանք մեզ չէին հասկանում: Այն մտքերը, որ մեզ շատ նոր և յուրօրինակ էին թվում, իրենց համար հին և ձանձրալի էին թվում, որոնք

ոչնչի չեն բերում և նույնիսկ վանող են: Դա մեզ ամենից շատն էր ապշեցնում: Մենք զարմանում էինք, որ այն մարդիկ, ում հետ մենք ներքին կապ էինք զգում, ում հետ մենք առաջ կարող էինք մեզ անհանգստացնող յուրաքանչյուր թեմայից խոսել և ումից մենք պատասխան էինք ակնկալում, չէին կարող տեսնել այն, ինչ մենք ենք տեսնում և ամենակարևորը, նրանք միանգամայն հակառակն էին տեսնում: Ես իմ սեփական փորձից կարող եմ ասել, որ այն շատ տարօրինակ և նույնիսկ ցավալի ազդեցություն ունեցավ ինձ վրա: Բացարձակապես անհնար էր մարդկանց ստիպել մեզ հասկանալ: Մենք, իհարկե, նման իրավիճակների սովոր ենք առօրյա կյանքում և գիտենք, որ այն մարդիկ, ովքեր մեր հանդեպ հոգու խորքում չարացած են կամ տգետ են և մտածել չեն կարող, կարող է և մեզ չհասկանալ, մեր բոլոր ասածները աղավաղել, վերագրել մեզ մտքեր, խոսքեր որոնք մենք երբեք չենք ունեցել և այլն: Իսկ այժմ, երբ տեսնում էինք, որ այս ամենը կատարվում է այն մարդկանց կողմից, ում մենք համարում էինք մեզ նման, ում հետ մենք այդքան շատ ժամանակ էինք անցկացնում և ովքեր թվում էր, թե մեզ կարող էին հասկանալ ավելի լավ, քան ուրիշները, այդ ամենը մեզ վրա շատ հուսալքող տպավորություն թողեց: Նմանատիպ դեպքերը, իհարկե, բացառություններ էին, իսկ մեր ընկերների մեծ մասը պարզապես անտարբեր էին, և մեր բոլոր ջանքերը իրենց ստիպել հետաքրքրվել Գ.-ի համակարգով ապարդյուն էին: Բայց երբեմն մենք նրանց վրա շատ հետաքրքիր տպավորություն էինք թողնում: Չեմ հիշում, թե ով էր մեզնից առաջինը նկատել, որ մեր ընկերները սկսել էին մտածել, որ մենք դեպի վատն ենք փոխվել: Նրանք կարծում էին, որ մենք նախկինի համեմատ ավելի անհետաքրքիր էինք դարձել, ասում էին մեզ, որ մենք անգույն ենք դառնում, խամրում ենք, կորցնում ենք մեր առաջվա անմիջականությունը, անտարբեր ենք դառնում և դառնում ենք “մեքենաներ”, դադարում ենք բնական մտածելուց, զգալուց, որ մենք պարզապես թուրթակների նման կրկնում ենք այն, ինչ լսում ենք Գ.-ից:

Այս լսելուց հետո Գ.-ն մի լավ ծիծաղեց, հետո ասեց.

“Սպասեք, վատագույնը դեռ առջևում է: Հասկանո՞ւմ եք, թե իրականում սա ինչ է նշանակում: Սա նշանակում է, որ դուք դադարել եք խաբելուց: Դուք այլևս չեք կարող առաջվա նման լավ և հմտորեն խաբել: Խաբող մարդը միշտ էլ հետաքրքիր մարդ է թվում, բայց դուք արդեն ամաչում եք խաբելուց: Դուք արդեն սկսել եք երբեմն գիտակցել, որ կան բաներ, որոնք դուք չգիտեք կամ չեք հասկանում և չեք կարող խոսել, ասես թե ամեն ինչ գիտեք դրա մասին: Դա, անշուշտ, նշանակում է, որ դուք դարձել եք ավելի անհետաքրքիր, քիչ յուրօրինակ, և ինչպես իրենք են ասում, ավելի քիչ անմիջական: Այժմ դուք ի վիճակի եք տեսնել, թե իրականում ինչպիսին են ձեր ընկերները: Իրենց տեսանկյունից, իրենք խղճում են ձեզ և իրենց տեսանկյունից իրենք ճիշտ են: Դուք արդեն սկսել եք “մահանալ”: Նա հատուկ շեշտեց այս բառը: “Շատ երկար ճանապարհ ունեք ամփոփելու մահանալու գործընթացը, բայց դուք դեռ շատ հիմարություններ եք անում: Դուք այլևս չեք կարող ինքներդ ձեզ այդպես հմտորեն խաբել, ինչպես առաջ, քանի որ արդեն ճշտի համը դուք հիմա գիտեք:

Դա նշանակում է, որ դուք սկսել եք հասկանալ: Երբ դուք ոչինչ չէիք հասկանում, դուք կարծում էիք, թե դուք ամեն ինչ հասկանում եք և կարող եք ամեն ինչ հասկանալ: Իսկ այժմ, երբ սկսում եք հասկանալ, դուք մտածում եք, որ ոչինչ չեք հասկանում: Դրա պատճառն այն է, որ առաջ դուք գաղափար չունեիք, թե ինչպիսին էր ճշմարտությունը: Իսկ այժմ, երբ հասկանում եք, ձեզ թվում է, թե չեք հասկանում”:

Մեր զրույցներում մենք հաճախակի կվերադառնանք մեր մասին, մեր ընկերների տպավորությունների և մեր տպավորությունների մասին մտքերին և կսկսենք հասկանալ, որ դրանք կամ կարող են միավորել մարդկանց, կամ էլ բաժանել նրանց:

Մի անգամ շատ երկար և հետաքրքիր զրույց ունեցանք Գ.-ի հետ “տիպերի” վերաբերյալ: Նա իր բոլոր ասածները կրկնեց և լրացումներ արեց, ցուցումներ տվեց անհատական աշխատանքների վերաբերյալ:

- Ձեզնից յուրաքանչյուրը իր կյանքում հանդիպած կլինի տարբեր մարդկանց, ովքեր իրար շատ նման են: Նման մարդիկ շատ հաճախ նույն տեսքն ունեն, նրանց պատասխան արձագանքը տարբեր երևույթներին միանգամայն նույնն է: Ինչ մեկն է սիրում, սիրում է նաև մյուսը և հակառակը: Դուք պիտի այդպիսի դեպքերը հիշեք, որպեսզի կարողանաք ուսումնասիրել “տիպերի գիտությունը”, քանի որ այն կարելի է ուսումնասիրել միայն օրինակներով: Այլ մեթոդ գոյություն չունի, և մնացածը զուտ երևակայություն է: Դուք պետք է հասկանաք, որ այն պայմաններում, որ դուք ապրում եք, չեք կարող վեց-յոթ տիպերից ավելի չեք կարող հանդիպել, չնայած որ կյանքում ավելի շատ հիմնական տիպեր գոյություն ունեն: Մնացած բոլորը այս հիմնական տիպերի միացություններն են:

- Քանի՞ հիմնական տիպեր գոյություն ունեն, - հարցրեց մեկը:
- Որոշ մարդիկ ասում են տասներկու՝ ըստ տասներկու առաքյալների, մյուսները ասում են ավելի շատ, - նա մի փոքր դադար տվեց:

- Կարո՞ղ ենք մենք իմանալ այդ տասներկու տեսակները, դրանց սահմանումները և բնորոշումները, - հարցրեց ներկաներից մեկը:

- Ես սպասում էի, որ դուք այդ հարցը կտաք: Դեռ ոչ մի դեպք չի եղել, որ ես տիպերի մասին խոսեմ և ինձ այդ հարցը չտան: Ինչպես չեք կարող հասկանալ, որ եթե այն հնարավոր լինեք բացատրել, ես ձեզ արդեն վաղուց բացատրած կլինեի: Նույն պատկերն է և “քառասունութ օրենքների” դեպքում: Հաստատ կլինի մեկը, ով կհարցնի, թե ինչպես կարող է իմանալ այդ քառասունութ օրենքների մասին, կարծես այն հնարավոր է: Հասկացեք, որ ձեզ տալիս են այն ամենը, ինչ հնարավոր է: Այն ամենը, որ ձեզ տրվում է, դրա օգնությամբ դուք պետք է կարողանաք բացահայտել մնացածը: Մակայն գիտեմ, որ ես հիմա զուտ ձեր ժամանակն եմ վատնում՝ ասելով այս ամենը: Դուք միևնույն է ինձ չեք հասկանում և դեռ բավականին երկար չեք հասկանա: Մտածեք, թե որն է տարբերությունը գիտելիքի և լինելու միջև: Կան բաներ, որոնք հասկանալու համար մեկ այլ արարածի առկայությունն է անհրաժեշտ:

- Իսկ եթե մեր շրջապատում յոթ տեսակից ավել չկա, ինչո՞ւ չենք կարող դրանք իմանալ, դրանց միջև եղած հիմնական տարբերությունները, որպեսզի դրանց հանդիպելիս կարողանանք դրանք ճանաչել և տարբերակել, - հարցրեց մեզանից մեկը:

- Դուք նախ և առաջ պետք է սկսեք ձեզնից՝ հիմնվելով իմ տված ցուցումների վրա, այլապես դուք այդ գիտելիքից օգուտ չեք կարող քաղել: Ձեզնից ոմանք կարող է մտածեն, որ նրանք ինչ-որ տիպեր են տեսնում, բայց իրականում դրանք տիպեր չեն: Տիպերը տեսնելու համար մարդ նախ և առաջ պետք է իմանա իր տիպը և կարողանա դրանից “հեռանալ”: Իր սեփական տիպը իմանալու համար մարդ պետք է լավ ուսումնասիրի իր սեփական կյանքը ամենասկզբից: Նա պետք է իմանա, թե ինչու և ինչպես որոշ դեպքեր պատահեցին: Ես բոլորիդ ուզում եմ առաջադրանք տալ: Այն կլինի միաժամանակ և՛ ընդհանուր, և՛ անհատական: Թող ձեզնից յուրաքանչյուրը պատմի իր կյանքը: Ամեն ինչ պետք է պատմել ոչ ճոխացված, ոչ էլ ինչ-որ

բաներ թաքցնելով: Շեշտը դրեք հիմնական և ամենակարևոր բաների վրա, առանց անդրադառնալու մանրուքներին և մանրամասներին: Դուք պետք է լինեք միանգամայն ազնիվ, առանց վախենալու, որ մնացածը կարող են ձեզ սխալ հասկանալ, որովհետև բոլորն էլ նույն իրավիճակում են, ինչ դուք: Բոլորն էլ պետք է “մերկացնեն” իրենց և ցույց տան իրենց իրական պատկերը: Այս առաջադրանքը ձեզ ցույց կտա, թե ինչու չպետք է խմբի ներսում կատարվածը դուրս գա իր շրջանակներից: Կարող եք ոչինչ չասել, եթե կարծում կամ կասկածում եք, որ ձեր ասածները կարող են դուրս գալ խմբի շրջանակներից, և դուք պետք է ամբողջությամբ և հաստատ համոզված լինեք դրանում: Այնուհետև դուք ի վիճակի կլինեք խոսել առանց վախենալու՝ հասկանալով, որ մնացածներն էլ են անելու նույն բանը:

Շուտով, երբ Գ.-ն մեկնեց Մոսկվա, մենք փորձում էինք տարբեր միջոցներով նրա տված առաջադրանքը կատարել: Նախ և առաջ Գ.-ի ասածները ավելի հեշտ կիրառելու համար մեզնից մի քանիսը իմ առաջարկությամբ փորձեցին իրենց կյանքը պատմել ավելի փոքր խմբերի շրջանակներում, նրանց մոտ, ում իրենք ամենից մոտ էին ճանաչում: Պետք է ասեմ, որ այս բոլոր փորձերը ոչինչ չտվեցին: Որոշ մարդիկ շատ էին պատմում, մնացածը՝ շատ քիչ: Որոշ մարդիկ շատ էին ընկնում մանրամասների և տարբեր բաների նկարագրությունների հետևից, որոնք իրենց կարծիքով լավագույնս բնութագրում են իրենց, մնացածները կենտրոնանում էին իրենց “մեղքերի” և սխալների վրա: Այս ամենը ընդհանուր առմամբ չկարողացավ արդարացնել Գ.-ի սպասումները: Արդյունքում պատմվում էին ծիծաղաշարժ պատմություններ, հուշեր, որոնք ոչ մեկին չէին հետաքրքրում, կամ ընտանեկան պատմություններ, որոնք լսելով մարդիկ սկսում էին հորանջել: Ինչ-որ մի բան սխալ էր ընթանում, նույնիսկ այն մարդիկ, ովքեր փորձում էին հնարավորինս չափ ազնիվ լինել, չէին կարող դա հասկանալ: Ես հիշում եմ իմ սեփական պատմելու փորձերը: Հենց սկզբից ես փորձեցի կիսվել իմ վաղ մանկության տպավորություններով, որոնք ես հիշարժան ու հետաքրքիր էի համարում, քանի որ ես ինձ հիշում էի դեռ շատ փոքր տարիքից և երբեմն դա ինձ նույնիսկ ապշեցնում էր: Սակայն ոչ մեկին հետաքրքիր չէր դա և ես շատ շուտ զգացի, որ սա չէ, որ մեզնից պահանջվում է: Ես շարունակեցի պատմել և իսկույն ևեթ զգացի, որ շատ բաներ կան, որոնք ես մտադրված չեմ պատմելու: Այս բացահայտումը ինձ համար ամբողջովին անսպասելի էր: Ես Գ.-ի ասածը առանց որևէ առարկությունների ընդունեցի, և մտածում էի, որ կկարողանամ պատմել իմ կյանքը առանց որոշակի դժվարությունների, իսկ իրականում դա միանգամայն անհնար էր: Ինչ-որ ահռելի հակազդող ուժ զգացի իմ մեջ, որի դեմ նույնիսկ չփորձեցի էլ պայքարել և իմ կյանքի որոշակի դրվագներից խոսելիս և փորձում էի միայն ընդհանուր առմամբ դրանք ներկայացնել առանց դրանց կարևորությունը շեշտելու: Մրա հետ կապված ես զգացի, որ իմ ձայնը և տոնայնությունը փոխվում են, երբ որ ես փորձում եմ այդպես խոսել: Դա ինձ օգնեց ուրիշներին նույնպես հասկանալ: Ես սկսեցի նկատել դա, երբ իրենք խոսում են իրենց կամ իրենց կյանքի որոշակի դրվագի մասին, նրանք ուրիշ ձայնով և տոնայնությամբ էին խոսում: Դա մի որոշակի տոնայնություն էր, որը ես առաջին անգամ լսեցի ինքս իմ մեջ, և որը ցույց էր տալիս, որ մարդիկ որևէ բան պատմելիս ուզում էին թաքցնել ինչ-որ մանրամասնություններ, բայց տոնայնությունը իրենց մատնում էր: Տոնայնության հետազոտությունները հետագայում ինձ օգնեցին շատ ու շատ այլ բաներ հասկանալ:

Երբ Գ.-ն հաջորդ անգամ եկավ Սանկտ Պետերբուրգ (նա Մոսկվայում էր գտնվում երկու-երեք ամիս), մենք իրեն պատմեցինք մեր փորձերի մասին: Նա ամեն ինչ լսեց և ասեց, որ մենք չգիտենք ինչպես տարբերել “անհատականությունը էությունից”:

- Անհատականությունը թաքնված է էության հետևում և էությունը՝ անհատականության: Նրանք երկուսն էլ քողարկում են մեկը մյուսին:

- Ինչպե՞ս կարելի է էությունը անջատել անհատականությունից, - հարցրեց ներկաներից մեկը:

Գ.-ն պատասխանեց.

- Ինչպե՞ս կարող ես անջատել քո սեփականը մի բանից, որը քոնը չէ: Պետք է մտածել և հասկանալ, թե որտեղից է քո բնավորության այս կամ այն գիծը գալիս և հարկավոր է գիտակցել, որ ձեր շրջապատի մարդկանցից շատերը շատ քիչ իրենց սեփականը ունեն: Այն ամենը, ինչ իրենք ունեն, իրենցը չէ, այլ մեծամասամբ գողացված է: Այն ամենը, ինչ իրենք անվանում են մտքեր, համոզմունքներ, տեսակետներ, աշխարհընկալում, այդ ամենը գողացված է այս ու այն տեղից, իսկ այդ ամբողջը միասին կազմում է անհատականությունը, որը պետք է մի կողմ դնել”:

- Բայց դուք ինքներդ ասեցիք, որ գործը պետք է սկսվի հենց անհատականությունից, - ասեց մեկը:

- Դուք միանգամայն ճիշտ եք: Դրա համար մենք պետք է պարզաբանենք, թե կոնկրետ ինչի մասին ենք մենք խոսում, մարդու ինչ զարգացման, որ մակարդակի մասին է խոսքը գնում: Ես ի նկատի ունեմ մի շարքային մարդու, ով ընդհանրապես կապ չունի մեր աշխատանքի հետ: Այսպիսի մարդը, մանավանդ եթե նա դասվում է մտավորական շարքին, ամբողջովին կազմված է անհատականությունից: Հիմնականում նրա էությունը դադարում է զարգանալուց շատ վաղ շրջանում: Ես շատերին գիտեմ՝ ընտանիքների հայրերի և պրոֆեսորների, հայտնի հեղինակների, ճանաչված քաղաքական գործիչների, ովքեր նույնիսկ նախարարներ էին, ում էության զարգացումը դադարել է մոտավորապես տասներկու տարեկանում: Եվ դա այդքան էլ վատ չէ: Էության որոշակի ասպեկտներ դադարում են զարգացումը դեռ հինգ-վեց տարեկանում և ամեն ինչ վերջանում է: Մնացյալը արդեն իրենց սեփականը չէ, այն որոշակի խաղացանկից է, կամ վերցված է գրքերից կամ էլ արդեն գոյություն ունեցող մոդելների կրկնօրինակումն է:

Սրանից հետո մենք շատ զրույցներ ունեցանք, որոնց Գ.-ն մասնակցեց, որոնց ընթացքում մենք փորձում էինք մեր ձախողման պատճառը պարզել, որպեսզի կարողանանք Գ.-ի տված առաջադրանքը կատարել: Որքան շատ էինք խոսում, այնքան չէինք կարողանում հասկանալ, թե ինչ է մեզնից պահանջվում:

- Սա միայն ցույց է տալիս, թե ինչ աստիճան եք դուք ճանաչում ինքներդ ձեզ, - ասեց Գ.-ն, - չեմ կասկածում, որ ձեզնից գոնե մի քանիսը իրոք ուզեցել են անել այն, ինչ ես ասել էի, այսինքն՝ անկեղծորեն պատմել իրեն կյանքը: Միևնույն ժամանակ դուք տեսնում եք, որ չեք կարող դա անել և չգիտեք նույնիսկ ինչպես սկսել: Բայց հիշեք, որ վաղ թե ուշ դուք պետք է դրա միջով անցնեք: Սա, ինչպես ասում են, առաջին թեստերից է, որ դուք պետք է հաղթահարեք ձեր ճանապարհին: Առանց այն հաղթահարելու հնարավոր չէ առաջ անցնել:

- Ի՞նչն է, որ մենք չենք հասկանում, - հարցրեց մեկը:

- Դուք չեք հասկանում, թե ինչ ասել է անկեղծ լինել: Դուք այնքան եք սովոր խաբել ինքներդ ձեզ և ուրիշներին, որ դուք ոչ կարող եք բռնել գտնել, ոչ էլ մտածել, թե ինչպես պատմել

ճշմարտությունը, երբ ուզում եք դա անել: Քո մասին ամբողջ ճշմարտությունը պատմելը շատ դժվար է, բայց նախքան այն պատմելը, մարդը պետք է նախ և առաջ այն իմանա, իսկ դուք անգամ չգիտեք, թե ձեր մասին ճշմարտությունը ինչից է բաղկացած: Մի օր ես ձեզ բոլորիդ կասեմ ձեզնից յուրաքանչյուրի հիմնական սխալը: Այդ ժամանակ կտեսնենք՝ կհասկաք ինձ, թե ոչ:

Մի շատ հետաքրքիր գրույց տեղի ունեցավ այդ ժամանակ: Ես չափազանց սրտին մոտ էի ընդունում այն ամենն, ինչ կատարվում էր այդ շրջանում, մանավանդ այն, որ չնայած իմ ջանքերին ես ընդհանրապես չէի կարողանում հիշել ինքս ինձ: Սկզբից ինչ-որ բան ստացվում էր, այնուհետև դա անցավ և ես անկասկած զգում էի, թե ինչ խորը քնի մեջ եմ ես գտնվում: Իմ կյանքը պատմելու փորձերի ձախողումները և հատկապես այն, որ ես չկարողացա հասկանալ Գ.-ի պահանջը, կրկնապատկեցին իմ վատ տրամադրությունը, որն, այնուամենայնիվ, արտահայտվում էր ոչ թե հուսահատությամբ, այլ նյարդայնությամբ:

Այս վիճակում ես մի անգամ եկա Գ.-ի հետ ճաշելու մի ռեստորանում Մադովայա փողոցի վրա՝ Գոստիննի Դվոր-ի դիմաց: Ես կամ չափազանց կոպիտ էի, կամ էլ շատ լուռ:

- Ինչ է պատահել քեզ այսօր, - հարցրեց Գ.-ն:
- Ես ինքս չգիտեմ, - պատասխանեցի, - պարզապես գիտակցում եմ, որ մենք ոչ մի բանի չենք հասնում, կամ ավելի ճիշտ կլինի ասել ես ոչնչի չեմ կարող հասնել: Ես չեմ կարող ուրիշների փոխարեն խոսել: Բայց ես Ձեզ այլևս չեմ հասկանում, և դուք այլևս դադարել եք որևէ բան բացատրելուց, ինչպես որ անում էիք սկզբում: Եվ ես զգում եմ, որ այսպես ոչնչի չեմ հասնի:
- Մի քիչ համբերություն, քննարկումները շուտով կսկսվեն, - ասեց Գ.-ն, - փորձեք հասկանալ ինձ: Մինչ այժմ մենք փորձել ենք յուրաքանչյուր բանի տեղը գտնել: Շուտով մենք ամեն ինչին իրենց անուններով կանվանենք:

Գ.-ի խոսքերը ինձ մոտ միանգամից տպավորվեցին, բայց ես չխորացա և շարունակեցի իմ մտքերը:

- Ի՞նչ կապ ունի: Ինչպե՞ս ենք մենք ամեն ինչ իրենց անուններով կոչելու, երբ ես չեմ կարող ոչ մի բան իրար հետ կապել: Դուք երբեք իմ հարցերին չեք պատասխանում:
- Շատ լավ, խոստանում եմ, որ կպատասխանեմ քո բոլոր հարցերին, ինչպես հեքիաթներում է լինում:

Ես զգում էի, որ նրա նպատակը ինձ այդ վիճակից հանելն էր և ես շատ երախտապարտ էի իրեն դրա համար, չնայած ինչ-որ բան ինձ հանգիստ չէր թողնում: Եվ հանկարծ հիշեցի, որ ամեն ինչից շատ ուզեցել եմ իմանալ, թե ինչ է Գ.-ն մտածում “հավերժական կրկնության” մասին, կամ ինչպես որ ես էի դա հասկանում կյանքի կրկնության մասին: Ես բազմիցս փորձել էի գրուցել Գ.-ի հետ այս թեմայով և հայտնել իրեն իմ կարծիքը, բայց այդ գրույցները հիմնականում վերածվում էին մենախոսությունների: Գ.-ն լուռ լսում եմ, ապա սկսում խոսել մեկ այլ բանից:

- Շատ լավ, - ասեցի ես, - ասեք ինձ ինչ եք կարծում կրկնության մասին: Ճշմարտության մաս կա դրա մեջ, թե ոչ: Ես նկատի ունեմ՝ արդյո՞ք մենք միայն մեկ անգամ ենք ապրում, թե ամեն ինչ կրկնվում է անվերջ, միայն թե մենք այն չենք գիտակցում և չենք հիշում:
- Կրկնության գաղափարը գերագույն ճշմարտությունը չէ, բայց ամենամոտ մոտավոր ճշմարտությունն է: Այս պարագայում ճշմարտությունը չի կարող բացատրվել բառերով: Քո ասածը ճշմարտությանը շատ մոտ է, և եթե դու կարողանաս հասկանալ, թե ես ինչու չեմ

խոսում դրա մասին, ապա ավելի կմոտենաս ճշմարտությանը: Ի՞նչ օգուտ, եթե մարդ իմանա կրկնության մասին, եթե ինքը դա չի գիտակցում և չի փոխվում: Կարելի է ասել, որ եթե մարդ չի փոխվում, ապա կրկնությունը իր համար գոյություն չունի: Եթե դու նրա հետ խոսես կրկնության մասին ապա դրանով միայն կխորացնես իր քունը: Ինչի՞ համար նա որևէ ջանք գործադրի այսօր, եթե դեռ առջևում այդքան ժամանակ կա և այդքան հնարավորություններ են ընձեռնվելու: Ինչի՞ համար անհանգստանալ այսօր: Սա է պատճառը, որ համակարգը ոչինչ չի ասում կրկնության մասին, միայն սա, որի մասին մենք գիտենք: Ինքդ քեզ փոխելու գործընթացը պետք է սկսել հենց այսօր, հենց հիմա: Բոլոր օրենքները կարող ես տեսնել նույնիսկ մեկ կյանքում: Կրկնության մասին գիտելիքները քեզ ոչինչ չեն տա, եթե դու չտեսնես թե ինչպես է ամեն ինչ կրկնվում նույնիսկ մեկ կյանքում՝ այս կյանքում, և եթե դու չփորձես փոխել քեզ խուսափելու համար այդ կրկնությունից: Իսկ եթե մարդը կարողանա ինչ-որ կարևոր բան փոխել իր կյանքում, կարողանա հասնել որևէ բանի, սա չի կորի:

- Ճի՞շտ է արդյոք այն ենթադրությունը, որ բոլոր ուղղվածությունները, որ ստեղծվում կամ կազմվում են, աճելու կարիք ունեն:

- Ե՛վ այո, և՛ ոչ, - ասեց Գ.-ն, - մեծ մասամբ դա այդպես է, ինչպես և մեկ կյանքում: Բայց ընդհանուր առմամբ հարկավոր է, որ նոր ուժեր մտնեն: Սա այժմ քեզ չեմ պատրասվում բացատրել, բայց թույլ տուր մտածել, թե ինչ ասել: Մոլորակային ազդեցությունները նույնպես ենթակա են փոփոխության: Նրանք էլ հավերժական չեն: Բացի այդ ուղղությունները նույնպես կարող են տարբեր լինել: Կան ուղղություններ, որ ստեղծվելուց հետո շարունակում են ինքնաստիճանի զարգանալ, իսկ կան ուղղություններ, որոնց պետք է մշտապես զարգացնել և դրանք անմիջապես թուլանում են և կարող են վերանալ, կամ երազների վերածվել, եթե մարդ դադարի դրանց վրա աշխատելուց: Ավելին՝ կա հատուկ ժամանակ, հատուկ ձևաչափեր ամեն ինչի համար: Ամեն ինչի համար հնարավորությունները գոյություն ունեն միայն որոշ ժամանակ: (Գ.-ն հատուկ շեշտեց այս բառերը)

Ինձ չափազանց հետաքրքրում էր Գ.-ի ասածները, չնայած որ դրանցից մեծ մասը ես գլխի էի ընկել արդեն: Բայց այն փաստը, որ նա կռահեց իմ հիմնական ենթադրությունները և այն ներդրումը, որ ինքը ունեցավ դրանցում, մեծ ազդեցություն թողեցին ինձ վրա: Ամեն ինչ սկսվեց կապակցվել իրար հետ: Ես զգացի, որ կարող եմ տեսնել “մոգական շենքի” ուրվագիծը, որի մասին խոսվում էր “Ճշմարտության պահեր” գրքում: Իմ վատ տրամադրությունը հօդս ցնդեց և ես նույնիսկ չհասկացա էլ երբ:

Գ.-ն ժպտում էր.

- Տեսնում ես՝ ինչքան հեշտ է քեզ վրա ազդելը: Բայց միգուցե ես պարզապես խաղում էի քեզ հետ, միգուցե կրկնություն ընդհանրապես էլ գոյություն չունի: Ինչ հաճելի է, երբ անտրամադիր Ուսպենսկին նստած է, ո՛չ ուտում է, ո՛չ խմում է. և եկեք իր տրամադրությունը բարձրացնենք, մտածում եմ ինքս ինձ: Իսկ ինչպես են բարձրացնում դիմացինի տրամադրությունը: Մեկը սիրում է ծիծաղաշարժ պատմություններ, մյուսի տրամադրությունը բարձրացնելու համար պետք է կարողանաս իր հոբբին գտնել: Իսկ ես գիտեմ Ուսպենսկու հոբբին՝ հավերժական կրկնությունը: Այսպիսով, ես իրեն ասեցի որ կպատասխանեմ իր յուրաքանչյուր հարցին: Իսկ ես գիտեի, թե ինչի մասին է ինքը հարցնելու: Գ.-ի կատակները ինձ վրա չազդեցին: Նա ինձ արդեն տվել էր մի շատ արժեքավոր բան, որը այլևս չէր կարող հետ վերցնել: Ես չհավատացի իր կատակներին և նրան, նա կարող էր այս ամենը հորինել կրկնության մասին: Ես նաև սովորեցի իր տոնայնությունը հասկանալ:

Հետագայում ես համոզվեցի, որ ես ճիշտ եմ, չնայած որ Գ.-ն չներկայացրեց իր համակարգի շրջանակներում կրկնության գաղափարը, բայց նա մի քանի անգամ անդրադարձավ կրկնության գաղափարին՝ մասնավորապես խոսելով մարդկանց կորցրած հնարավորությունների մասին, ովքեր համակարգում աշխատել են, այնուհետև հեռացել այնտեղից:

Ջրույցները խմբում շարունակվում էին սովորականի պես: Մի անգամ Գ.-ն ասեց, որ ուզում է անհատականությունը էությունից բաժանելու մի փորձ անի: Մենք բոլորս էլ շատ հետաքրքրված էին, որովհետև նա “փորձեր” բազմիցս խոստացել էր, բայց մենք այդպես էլ դրանցից որևէ մեկը չենք տեսել: Ես չեմ պատրաստվում իր մեթոդները բացատրել, պարզապես կնկարագրեմ առաջին փորձի համար իր ընտրած մարդկանց: Առաջինը բավականին տարիքով մարդ էր, ով հասարակության մեջ բավականին զգալի դեր ուներ: Մեր հանդիպումների ժամանակ նա հաճախ խոսում էր իր մասին, իր ընտանիքի, քրիստոնեության, այդ ժամանակ տեղի ունեցող պարտերազմի հետ կապված դեպքերի և իր ունեցած բոլոր “սկանդալների” մասին, որոնցից ինքն արդեն զզվել էր: Մյուսն ավելի երիտասարդ էր, մեզնից շատերը նրան այնքան էլ լուրջ մարդ չէր համարում: Շատ հաճախ նա իրեն հիմարի տեղ էր դնում, կամ էլ ընդհակառակը՝ սկսում էր անվերջ բանավիճել համակարգի այս կամ այն մանրուքի վերաբերյալ, որն ընդհանրապես կապ չուներ ընդհանուր թեմայի հետ: Բավականին բարդ էր նրան հասկանալ: Նա շատ բարդ էր արտահայտվում նույնիսկ ամենահասարակ բաների մասին խոսելիս՝ իրար խառնելով բոլոր հնարավոր տեսակետները և տարբեր կատեգորիաների և մակարդակների պատկանող բառերը:

Անցնեմ փորձին: Մենք նստած էին մեծ նկարչական սենյակում և սովորականի պես զրուցում էինք:

- Այժմ նայեք, - շնչաց Գ.-ն:

Այն երկուսից ավելի տարիքովը տաքացած խոսում էր ինչ-որ թեմայի շուրջ և հանկարծ նա լռեց նախադասության կեսից և ասես մխրճվեց իր բազկաթոռի մեջ և սկսեց նայել իր առջև: Գ.-ի ազդանշանից հետո մենք շարունակեցինք խոսել առանց նրա վրա ուշադրություն դարձնելու: Երիտասարդը լսում էր մեր խոսակցությունը և սկսեց խոսել ինքն իրեն: Բոլորս նայեցինք նրան: Նրա ձայնի տոնայնությունը փոխվել էր: Նա մեզ պատմեց իր մոտ արձանագրած սեփական փաստերը շատ պարզ, հասկանալի ձևով, առանց վերամբարձ, անսովոր բառեր օգտագործելու և չափազանցնելու: Առաջինը դեռ ընկղմված էր իր աթոռի մեջ առանց շարժվելու՝ ասես մի գնդի վերածված:

- Հարցրեք, թե ինչի մասին է նա մտածում, - ցածր ասեց Գ.-ն:

- Ե՛ս, - բարձրացնելով գլուխը՝ հարցրեց նա՝ ասես հենց նոր այդ հարցից արթնանար, - ոչնչի մասին էլ չեմ մտածում:

Նա մի փոքր ժպտաց, ասես ցանկացավ ներողություն խնդրել կամ էլ զարմացած էր բոլորի վրա, թե ինչու են իրեն այդ հարցը տալիս:

- Դե, դու հենց նոր մեզ հետ պատերազմից էիր խոսում, - ասեց մեզնից մեկը, - թե ինչ կպատահի, եթե մենք գերմանացիների հետ հաշտություն կնքենք: Դու այժմ է՞լ ես այդ կարծիքին:

- Ճիշտն ասած չգիտեմ, - անվստահ պատասխանեց նա, - ես այդպիսի բանե՞ր եմ ասել:

- Այո, իհարկե, դու հենց նոր ասում էիր, որ բոլորը հարկ է, որ մտածեն այդ մասին, որ ոչ մեկն իրավունք չունի չմտածել այդ մասին և ոչ ոք իրավունք չունի մոռանալ պատերազմը: Բոլորը պետք է իրենց կարծիքն ունենան՝ կամ պատերազմին կողմ, կամ՝ դեմ:

Նա այնպես էր լսում, ասես ոչ մի բառ չէր հասկանում թե ինչ է ասում հարց տվողը:

- Իսկապե՞ս, - հարցրեց, - ինչ տարօրինակ է: Ես նման ոչ-մի բան չեմ հիշում:

- Բայց չե՞ որ քեզ հետաքրքրում է այդ թեման:

- Ոչ: Այն բացարձակապես ինձ չի հետաքրքրում:

- Մի՞թե դու չես մտածում այս բոլոր դեպքերի հետևանքների մասին Ռուսաստանի համար, ամբողջ հասարակության համար:

Նա գլուխը թափահարեց:

- Ես չեմ հասկանում՝ ինչի մասին ես դու խոսում, դա ինձ ամենևին էլ չի հետաքրքրում և ես դրա մասին ոչինչ չգիտեմ:

- Լավ, բայց նախքան այդ դու խոսում էիր քո ընտանիքից: Չե՞ս կարծում, որ ավելի հեշտ կլինեիր քեզ համար, եթե նրանք նույնպես հետաքրքրվեին մեր մտքերով և միանային մեր աշխատանքին:

- Հավանաբար լավ կլինեիր, - կրկին անվստահ պատասխանեց նա, - բայց ինչու՞ պետք է ես մտածեմ այդ մասին:

- Դե, դու ասում էիր, որ վախենում ես այն անդունդից, որ սկսել է գոյանալ ձեր միջև:

Պատասխան չկա:

- Իսկ ի՞նչ ես կարծում այդ թեմայի շուրջ:

- Ես դրա մասին ընդհանրապես չեմ մտածում:

- Եթե քեզ այժմ հարցնեին, թե ինչ կցանկանայիր, ի՞նչ կպատասխանեիր:

- Ես ոչինչ էլ չեմ ուզում, - թափառող հայացքով պատասխանեց նա:

- Բայց մտածի, ի՞նչ ես ուզում հենց հիմա:

Իր կողքի սեղանին կես բաժակ թեյ էր դրված: Նա երկար նայեց բաժակին, ասես ինչ-որ բան էր մտածում, այնուհետև նա իր կողքերը նայեց և այնպիսի լուրջ ձայնով և տոնայնությամբ պատասխանեց, որ մենք բոլորս իսկույն նեթ նայեցինք իրար:

- Իմ կարծիքով մորու մուրաբա եմ ուզում:

- Ինչո՞ւ էք նրան հարցաքննում, - անկյունից ասեց մեկն, ում ձայնը հազիվ թե կարողացանք ճանաչել:

Սա երկրորդ «փորձն» էր:

- Չե՞ք տեսնում, որ նա քնած է:

- Իսկ դո՞ւ, - հարցրեց մեզնից մեկը:

- Ես, ընդհակառակը, արթնացել եմ:

- Իսկ ինչո՞ւ նա քնեց մինչ դեռ դու արթնացար:

- Չգիտեմ:

Սրանով փորձն ավարտվեց:

Հաջորդ օրը նրանցից ոչ մեկը ոչինչ չէր հիշում: Հաջորդ օրը Գ.-ն մեզ բացատրեց, որ առաջին մարդու պարագայում իր ամենօրյա խոսակցության թեմայի, անհանգստությունների և մտահոգությունների հետևում իր անհատականությունն էր կանգնած: Երբ իր անհատականությունը քնեց, արդյունքում ոչինչ չմնաց: Իսկ հաջորդ մարդու անհատականության մեջ նույնպես չափազանց շատ անիմաստ շատախոսություն կար, բայց

անհատականության հետևում կար նաև էություն, որը գիտեր այնքան, ինչքան անհատականությունը և նույնիսկ ավելի լավ, և երբ անհատականությունը քնեց, էությունը փոխարինեց դրան և այն շատ ավելի իրավունքներ ունեցավ:

- Ուշադրություն դարձրեք այն հանգամանքին, որ նա հակառակ իր սովորության շատ քիչ խոսեց, - ասեց Գ.-ն, - բայց նա հետևում էր ձեզ բոլորիդ և այն ամենը, ինչ տեղի էր ունենում, նրա աչքից ոչինչ չվրիպեց:

- Իսկ ի՞նչ օգուտ, եթե նա ոչինչ չի հիշում, - հարցրեց մեզնից մեկը:

- Էությունը հիշում է, բայց անհատականությունը մոռացել է: Հենց այդպես էլ անհրաժեշտ է, այլապես անհատականությունը ամբողջ տեղի ունեցածը կխեղաթյուրեր և այս ամենը կվերագրեր իրեն:

- Բայց սա հենց սև կախարդանք է, - ասեց մեկը:

- Ավելի վատ, քան սև կախարդանքը, - պատասխանեց Գ.-ն, - դուք դեռ դրանից ավելի վատն էլ կտեսնեք:

Մի անգամ “տիպերի” մասին խոսելիս Գ.-ն ասեց.

- Նկատել էք, թե որքան մեծ դեր են խաղում տիպերը տղամարդու և կնոջ հարաբերությունների մեջ:

- Այո, ես նկատել եմ, - պատասխանեցի ես, - ամբողջ կյանքում ամեն տղամարդ շփվում է որոշակի տիպի կանանց հետ և հակառակը, չնայած այն հանգամանքին, որ այդ տիպերը դեռ վաղուց կանխորոշվել են:

- Քո ասածի մեջ շատ ճշմարտություն կա, ըստ քեզ այն մի քիչ շատ ընդհանրացված է: Իրականում, դուք տղամարկանց և կանանց տիպեր չեք տեսել, այլ միայն իրադարձությունների տիպեր: Այն, ինչի մասին որ ես խոսում եմ, վերաբերում է իրական տիպերին, այսինքն՝ էությանը: Եթե մարդիկ էությամբ առաջնորդվելով ապրեին, ապա տիպերը միշտ էլ իրար կգտնեին և տարբեր տիպի մարդիկ երբեք իրար հետ չէին լինի: Իսկ մարդիկ ապրում են անհատականությամբ: Անհատականությունն ունի իր հետաքրքրությունները, իր ճաշակը, որը որևէ ընդհանուր եզրեր չունի էության հետ: Այս դեպքում անհատականությունը կենտրոնների սխալ աշխատելու արդյունքն է: Այդ իսկ պատճառով անհատականությունը կարող է չսիրել այն, ինչ դուր է գալիս էությանը, և սիրել այն, ինչ էությունը չի սիրում: Այստեղ է, որ պայքարը անհատականության և էության մեջ սկսվում է: Էությունը գիտի, թե ինչ է ուզում, բայց չի կարող այն բացատրել: Անհատականությունը չի ուզում լսել էությանը և ուշադրություն չի դարձնում նրա վրա: Այն ունի իր սեփական ցանկությունները և գնում է իր յուրօրինակ ճանապարհով: Բայց նրա ուժը անսպառ չէ: Ինչևէ, նրանք ստիպված են համատեղ ապրել, բայց նրանք ասում են միմյանց: Ոչ մի դերասանություն այստեղ չի օգնի: Այսպես թե այնպես մեկն ու մեկը պետք է վերադաս դիրքում լինի և որոշումներ կայացնի:

Այս պարագայում որևէ վերլուծություն կամ հաշվարկ չի օգնի: Ոչ էլ այսպես կոչված սերը կարող է ինչ-որ բանով օգնել, բառի բուն իմաստով մեխանիկական մարդը չի կարող սիրել: Նրա մոտ կամ սեր լինում է, կամ չի լինում:

Միևնույն ժամանակ սեքսը մեծ դեր է խաղում կյանքի մեխանիկականությունն ապահովելու գործում: Ամեն ինչ, ինչ մարդիկ անում են, կապված է սեքսի հետ. քաղաքականություն, կրոն, մշակույթ, թատրոն, երաժշտություն՝ բոլորը կապված են սեքսի

հետ: Ձեր կարծիքով մարդիկ գնում են եկեղեցի կամ թատրոն աղոթելու կամ նոր ներկայացում նայելու՝ համար: Հիմնական պատճառը այնտեղ գնալու այն է, որ անտեղ շատ տղամարդիկ և կանայք են լինում: Սա է ամբողջ հավաքությունների հիմնական ձգողական ուժը: Ձեր կարծիքով ի՞նչն է մարդկանց բերում սրճարաններ, ռեստորաններ և խնջույքների: Միայն մեկ բան՝ սեքսը: Սեքսն է հանդիսանում բոլոր մեխանիկականության դրդիչ ուժը: Քունը, հիպնոսը, այս ամենը կախված են նրանից:

Պետք է փորձեք հասկանալ՝ ինչ ինկատի ունեն: Մեխանիկականությունը հատկապես շատ վտանգավոր է, երբ մարդիկ փորձում են դրան մեկ այլ բացատրություն տալ, քան այն իրականում է: Երբ որ սեքսն է ամեն ինչ գիտակցում է և չի քողարկում ինքն իրեն մեկ այլ բանով, դա այն մեխանիկականությունը չէ, ինչի մասին որ ես խոսում եմ: Հակառակը, եթե սեքսը գոյություն ունի առանց որևէ բանից կախվածության մեջ լինելով, դա մեծ ձեռքբերում է: Բայց չարը թաքնված է այս մշտական ինքնախաբեության մեջ:

- Եվ ինչ ենթադրություն կարելի է անել այստեղից: Այն հարկ է փոխել, թե ոչ, - հարցրեց մեկը: Գ.-ն ժպտաց.

- Այդ հարցը միշտ տալիս են: Ինչից էլ նրանք խոսելիս լինեն, անպայման կհարցնեն՝ դա այդպե՞ս պետք է լինի թե այն հարկավոր է փոխել, ի՞նչ է հարկավոր անել այդ դեպքում, ասես թե հնարավոր է ինչ-որ բան փոխել կամ անել: Դուք պետք է որ մինչև հիմա հասկացած լինեիք, թե որքան միամիտ հարցեր եք տալիս: Մոլորակային ուժերն են այս հարաբերությունները ստեղծել և իրենք էլ հենց կառավարում են դրանք: Նույնիսկ ինքը՝ Աստված, չկարողացավ փոխել որևէ բան: Հիշո՞ւմ եք՝ ինչ էր ասվում քառասունութ օրենքների վերաբերյալ: Դրանք փոխել հնարավոր չէ, իսկ դրանց մի զգալի մասից ազատվելը հնարավոր է, այսինքն հնարավոր է փոխել հարաբերությունները զարգացնելու տեսանկյունը, հնարավոր է խույս տալ հիմնական օրենքից: Պետք է հասկանաք, որ նման և այլ դեպքերում հիմնական օրենքը փոխելն անհնար է: Բայց մարդ կարող է իր սեփական դիրքորոշումը փոխել այս օրենքի նկատմամբ, կարող է խույս տալ հիմնական օրենքից: Իմ ասած սեքսի՝ մարդկանց վրա ունեցած ազդեցության այս օրենքը շատ հնարավորություններ է ներառում: Այն ներառում է ստրկության հիմնական ձևերը և նրանից ազատվելու հիմնական հնարավորությունները: Սա է, որ դուք պետք է փորձեք հասկանալ:

“Նոր ծնունդը”, որ մասին մենք նախկինում խոսել ենք նույն չափ կապ ունի սեքսի էներգիայի հետ, որքան ֆիզիկական ծննդի և տեսակի բազմացման հետ: “Ջրածին si12” մարդու օրգանիզմում սննդի փոխակերպման վերջնական արդյունքն է: Մրա միջոցով և օգնությամբ է սեքսը տեղի ունենում: Այն “լրացուցիչ ցնցման” կամ “արմատն” է, կամ “պտուղը”: Բայց այս “ցնցումը” կարող է երկակի բնույթ ունենալ, որն արտադրում է si12-ը, և այն կարող է սկսվել տարբեր օկտավաներից, մեկը օրգանիզմից դուրս, որ արտադրել է si12-ը, մյուսն էլ հենց օրգանիզմում: Տղամարդու և կնոջ միացման ժամանակ si12-ը և դրա հետ կապված ամեն ինչը կազմում են առաջին տեսակի “ցնցում”, իսկ նոր օկտավան, որը սկսվում է դրա օգնությամբ, ամեն ինչից անկախ առաջացնում է միանգամայն նոր օրգանիզմ կամ նոր կյանք:

Սա է si12-ի տված էներգիան ճիշտ օգտագործելու ձևը: Բայց նույն օրգանիզմում դեռ ավելի՞ հնարավորություններ կան: Դա ներկայիս օրգանիզմում նոր կյանքի ստեղծման հնարավորությունն է առանց երկուսի՝ տղամարդու և կնոջ միավորման: Այս դեպքում նոր օկտավան զարգանում է հենց օրգանիզմի ներսում և ոչ թե դրանից դուրս: Սա կոչվում է

“աստղային մարմնի” ստեղծում: Պետք է իմանաք, որ “աստղային մարմինը” ծնվում է նույն նյութերից և նույն կերպ ինչ ֆիզիկական մարմինը, պարզապես ընթացքն է ուրիշ: Ամբողջ ֆիզիկական մարմինը, նրա բջիջները առաջանում են si12-ի արտադրած նյութերից: Երբ որ դրանք արդեն բավականին սնուցվել են, si12-ը սկսում է տեսքի գալ: Այս որոշակի տեսք ստանալն էլ կազմում է “աստղային մարմնի” ձևավորումը:

Si12-ի վերածումը էներգիայի և ամբողջ օրգանիզմի սնուցումը այդ էներգիայով քիմիական գիտությունը անվանում է տրանսմուտացիա կամ վերափոխում: Իսկ ֆիզիկական մարմնի վերափոխումը աստղային մարմնի, քիմիան անվանում է “անմշակ”-ի վերափոխումը “մշակված”-ի կամ սովորական մետաղների վերափոխումը ոսկու:

Ավարտուն վերափոխումը, այսինքն՝ աստղային մարմնի ձևավորումը, միակ հնարավոր առողջ, նորմալ գործող օրգանիզմն է: Հիվանդ, խեղաթյուրված կամ թերի օրգանիզմում վերափոխում չի կարող լինել:

- Վերափոխման համար արդյոք անհրաժեշտ է սեքսուալ զսպվածություն, և ընդհանուր առմամբ, սեքսուալ զսպվածությունը օգուտ կտա ինքդ քո վրա աշխատելու գործում, - հարցրեցինք մենք:

- Այստեղ տարբեր հարցեր կան: Առաջին հերթին տրանսմուտացիայի համար սեքսուալ զսպվածությունը անհրաժեշտ է միայն որոշակի դեպքերում և որոշ մարդկանց մոտ: Մյուսների մոտ այն ամեննին էլ անհրաժեշտ չէ: Իսկ տրանսմուտացիան սկսվելուն պես այն նախորդների մոտ ինքնստիմյան կվերսկսվի: Թույլ տվեք ավելի մանրամասն բացատրել: Որոշ մարդկանց մոտ բավականին երկար սեքսուալ զսպվածություն է անհրաժեշտ որպեսզի տրանսմուտացիան սկսվի: Բայց հենց այն սկսվի, այն այլևս անհրաժեշտ չէ: Մնացած դեպքերում, մյուս տիպի մարդկանց մոտ տրանսմուտացիան կարող է սկսվել մարդկանց մոտ և նորմալ սեքսուալ կյանք ունենալու դեպքում և նույնիսկ ընդհակառակը, այն կարող է ավելի շուտ սկսվել և արագ ընթանալ՝ սեքսից ստացված էներգիայից սնվելով: Երրորդ դեպքում տրանսմուտացիայի սկսվելը չի պահանջում զսպվածություն, բայց այն սկսվելուն պես օգտագործում է ամբողջ սեքսի էներգիան և վերջ է դնում նորմալ սեքսուալ կյանքին կամ դրանից գոյացած էներգիային:

Այնուհետև մյուս հարցը: Սեքսուալ զսպվածությունը օգտակա՞ր է աշխատանքի համար:

Այն օգտակար է, եթե զսպվածություն կա բոլոր կենտրոններում միաժամանակ: Եթե զսպվածություն կա միայն մեկ կենտրոնում, սակայն լիակատար ազատություն է տրված մնացած կենտրոններին, սրանից ավելի վտանգավոր բան չկա: Բացի այդ, զսպվածությունը կարող է օգտակար լինել միայն այն դեպքում, երբ մարդ գիտի, թե որտեղ և ինչպես օգտագործի արդյունքում խնայված էներգիան: Եթե նա չգիտի, թե ինչպես օգտագործի այդ էներգիան, ապա զսպվածությունը ոչ մի օգուտ է չի բերի:

Մյուս հարցը՝ աշխատանքի տեսանկյունից ո՞րն է ամենաճիշտ կյանք վարելու տեսակը:

Այս հարցին հնարավոր չէ կոնկրետ պատասխանել: Քանի դեռ մարդը չգիտի, թե որն է իր համար լավ, որը՝ վատ, ավելի ճիշտ է ոչինչ չփորձել անել: Քանի դեռ նա նոր գիտելիք չի ստացել, ավելի ճիշտ կլինի, որ նա իր կյանքը վարի առաջնորդվելով բնական օրենքներով: Եթե մարդ սկսի ինքնագլուխ ինչ-որ տեսություններ հնարել, այն միայն կարող է իրեն հոգեկան խանգարման հասցնել: Ինչնէ, հարկ է իմանալ, որ միայն այն մարդը որ

բացարձակապես նորմալ է տրամադրված սեքսի հանդեպ կարող է աշխատել: Որևէ “յուրօրինակություն”, տարօրինակ նախընտրությունները, ցանկությունները կամ էլ մյուս կողմից վախը, մշտապես որևէ բանից խուսափելը՝ այս ամենը պետք է վերացնել հենց սկզբից: Ժամանակակից կրթությունը և կյանքը պատճառ են դարձել բազմապիսի սեքսուալ խանգարում ունեցող մարդկանց, որ ընհանրապես ընդհանրապես կորցրել են աշխատելու հնարավորությունը:

Ընդհանուր առմամբ երկու ճիշտ ճանախարհի կա ավելացնելու սեքսուալ էներգիան՝ նորմալ սեքսուալ կյանքը և տրանսմուտացիան: Այս բնագավառում որևէ հայտնագործությունը շատ վտանգավոր է:

Մարդիկ հնուց ի վեր փորձել են օգտագործել զսպվածությունը: Որոշ դեպքերում այն արդյունք տվել է, բայց հիմնականում այն առիթ էր հանդիսացել սովորական զգացումների փոխակերպմանը աննորմալի, քանի որ վերջիններս թաքցնելը շատ ավելի հեշտ է: Սակայն սրա մասին չէ, որ ուզում եմ այժմ խոսել: Դուք պետք է հասկանաք, թե որտեղ է թաքնված չարը և որն է առիթ հանդիսանում ստրկության: Դրա պատճառը ոչ թե սեքսն է, այլ սեքսի խեղաթյուրումը: Սա նույնպես պետք է ճիշտ հասկանալ: Մարդիկ սրա տակ հիմնականում հասկանում են սեքսի չափազանց շատ կիրառումը կամ դրա այլանդակումը: Բայց համեմատության կարգով, սրանք կարելի է համարել սեքսի խեղաթյուրման անմեղ տեսակներ: Սեքսի խեղաթյուրելը ճիշտ հասկանալու համար պետք է նախ և առաջ մարդկային մեխանիզմը ճիշտ իմանալ: Այն նշանակում է սեքսի նկատմամբ կենտրոնների սխալ աշխատանքը, այսինքն՝ սեքսի կենտրոնի աշխատանքը մյուս կենտրոնների միջոցով և հակառակը, կամ ավելի կոնկրետ՝ սեքսի կենտրոնի աշխատանքը մյուս կենտրոնների էներգիայի հաշվին և հակառակը:

- Կարող է սեքսը մի առանձին կենտրոն համարվել, - հարցրեց մեկը:
- Այո, կարող է, - պատասխանեց Գ.-ն, - միևնույն ժամանակ եթե ստորև ներկայացվածը հաշվի առնենք միասին վերցված, ապա սեքսը կարելի է համարել շարժողական կենտրոնի չեզոքացնող մի մաս:

- Ի՞նչ “ջրածնով” է գործում սեքսը, - հարցրեց մյուսը:

Այս հարցը բոլորիս էլ միշտ հետաքրքրել էր, բայց դրա պատասխանը մենք այդպես էլ չէինք կարողացել տալ: Իսկ երբ Գ.-ին էր այդ հարցը տվում, նա երբեք կոնկրետ պատասխան չէր տալիս:

- Սեքսի կենտրոնը գործում է “ջրածին 12”-ի միջոցով, - այս առիթով ասեց Գ.-ն, - այսինքն՝ կարելի է ասել, որ այն պետք է, որ աշխատի դրա միջոցով: Դա si12-ն է: Բայց իրականում շատ հազվադեպ է պատահում, որ այն ճիշտ ջրածնի հետ է աշխատում: Սեքսի կենտրոնի շեղումները առանձնահատուկ հետազոտություն են պահանջում:

- Նախ և առաջ հարկ է նշել, որ սեքսի, ինչպես նաև բարձրագույն էմոցիոնալ և մտածողական կենտրոններում նորմալ վիճակում բացասական կողմ գոյություն չունի: Բացի բարձրագույն կենտրոններից բոլոր կենտրոնները՝ մտածողական, էմոցիոնալ, շարժողական, բնագոյային և մնացած բոլոր կենտրոնները բաղկացած են այսպես ասած երկու՝ դրական և բացասական կենտրոններից՝ հաստատող և ժխտող կամ “այո” և “ոչ” մտածողական կենտրոնում, հաճելի և տհաճ զգացումներ շարժողական և բնագոյային կենտրոններում: Սեքսի կենտրոնում այդպիսի բաժանում գոյություն չունի: Այն չունի դրական և բացասական կողմեր: Դրա ժամանակ չկա հաճելի կամ տհաճ զգացումներ, կա կամ հաճելի զգացումներ կամ այդ

զգացումի բացակայություն, բացարձակ անտարբերություն: Բայց կենտրոնների սխալ աշխատանքի արդյունքում շատ հաճախ պատահում է, որ էմոցիոնալ կենտրոնի բացասական կողմը միանում է սեքսի կենտրոնին կամ էլ սեքսի կենտրոնի կրկնօրինակին, որն առաջացնում է տհաճ զգացումներ: Այն մարդիկ, ովքեր տհաճ զգացումներ են ունեցել, որոնք առաջացել են իրենց երևակայության կամ մտածելու արդյունքում համարում են, որ իրենք ինչ-որ շնորհ ունեն կամ որևէ յուրօրինակ բան կա իրենց մեջ, իսկ իրականում դա պարզապես հիվանդություն է: Այն ամենը, ինչ կապված է սեքսի հետ, կամ պետք է հաճույք պարգևի, կամ էլ անտարբերություն: Տհաճ զգացումները բոլորը ստացվում են էմոցիոնալ և բնագոյային կենտրոններից:

Սա է “սեքսի խեղաթյուրումը”: Այսուհետև պետք է հիշել որ սեքսը գործում է ջրածին 12-ի միջոցով: Սա նշանակում է, որ այն ավելի ուժեղ և արագ է մնացած բոլոր կենտրոններից: Սեքսը իրականում ղեկավարում է մնացած բոլոր կենտրոնները: Միակ դեպքը սովորական իրավիճակում, երբ մարդը ցանկություն չունի և գտնվում է անգիտակից վիճակում, սեքսի կենտրոնը իր ենթակայության տակ է պահում “բուֆերն” է: “Բուֆերը” այն կարող է հասցնել լրիվ գրոյի, սակայն չի կարող վերացնել դրա մեջ եղած էներգիան: Այն մնում է կենտրոնում և փոխանցվում է այն կենտրոններին, որոնք կարող են արտահայտվել այդ կենտրոնի միջոցով, այլ կերպ ասած՝ նրանք գողանում են սեքսի կենտրոնի եղած էներգիան, որը չի օգտագործվում: Երբ սեքսի էներգիան օգտագործվում է այլ կենտրոնի կողմից, այն որոշակի “համ” ունի, որը արտահայտվում է նրանց արած աշխատանքում տաքարյունությամբ և կրքոտ լինելով, որը բնորոշ է սեքսի կենտրոնին և որը չի օգտագործվել նրա կողմից: Մտածողական կենտրոնը գրքեր է գրում, բայց սեքսի կենտրոնի էներգիան օգտագործելով՝ նա չի գրում պարզապես փիլիսոփայության, գիտության, քաղաքականության մասին, այլ մշտապես պայքարի, բանավեճերի մեջ է, քննադատում է, ստեղծում է նոր սուբյեկտիվ տեսություններ: Էմոցիոնալ կենտրոնը քրիստոնեություն է քարոզում, զսպվածություն, ասկետիցիզմ, կամ էլ վախ ու սարսափ մեղք գործելուց, դժոքից, մեղսագործների տառապանքները, հավերժական կրակը, և այս ամենը սեքսի էներգիան օգտագործելիս: Մյուս կողմից էլ այն կարող է հեղափոխություններ կազմակերպել, թալանել, վառել, սպանել նույն էներգիայով: Շարժողական կենտրոնը գործում է սպորտի ժամանակ, տարբեր ցուցանիշներ է գրանցում, սարեր է բարձրանում, արգելքներ է հաղթահարում, ըմբշամարտում է, կռվում և այլն: Վերը նշված բոլոր դեպքերում մտածողական, ինչպես նաև էմոցիոնալ և շարժողական կենտրոնների աշխատանքը, երբ կատարվում է սեքսի կենտրոնից վերցված էներգիայով, մեկ ընդհանուր բնորոշում ունի բոլորի համար և դա ամեն ինչը լրացուցիչ ուժով անելն է. բայց միևնույն ժամանակ այդ արվածը միանգամայն անարդյունք է: Ո՛չ մտածողական, ո՛չ էլ էմոցիոնալ ու շարժողական կենտրոնները կարող են որևէ օգտակար բան անել՝ սեքսի էներգիան օգտագործելով: Սա սեքսը “խեղաթյուրելու” ևս մեկ օրինակ է:

Սա միայն հարցի մեկ կողմն է: Մյուս կողմից էլ, երբ սեքսի կենտրոնի էներգիան ամբողջովին օգտագործված է մյուս կենտրոնների կողմից և օգտագործված է անօգուտ գործի համար, իր համար ոչինչ էլ չի մնում և սեքսի կենտրոնը ստիպված է լինում գողանալ այդ էներգիան մյուս կենտրոններից, որոնց էներգիան, սակայն, շատ ավելի ցածր է և թույլ, քան իրենք: Սեքսի կենտրոնը, այնուամենայնիվ, շատ կարևոր է օրգանիզմի նորմալ աշխատանքի համար, մասնավորապես օրգանիզմի ներքին աճի համար, քանի որ աշխատելով si12 ջրածնով՝ այն կարող է դրական տպավորություններից միանգամայն դրական լիցքեր

ստանալ, որոնք չեն ստացվում սովորական կենտրոններից: Այս դրական լիցքերը անհրաժեշտ են օրգանիզմին բարձրագույն “ջրածիններ” արտադրելու համար: Բայց երբ սեքսի կենտրոնը աշխատում է իր էներգիայից ավելի քիչ էներգիայով, որն իրենը չէ, և համեմատաբար ավելի ցածր “48 և 24 ջրածնով”, տպավորությունները շատ ավելի թույլ են ստացվում և դադարում են օրգանիզմի համար խաղալ այն դերը, որն անհրաժեշտ էր: Միևնույն ժամանակ իր էներգիայի օգտագործումը միաժամանակ այլ էներգիայի հետ, օրինակ՝ մտածողական կենտրոնի հետ ստեղծում է սեքսի մասին ավելի մեծ պատկերացում և այդ պատկերացմամբ բավարարվելու ուղղվածություն: Էմոցիոնալ կենտրոնի էներգիայի հետ այն սենսիվենտալություն է առաջացնում, կամ էլ հակառակը՝ խանդ, դաժանություն: Մա նույնպես սեքսի “խեղաթյուրման” օրինակ է:

- Ի՞նչ պետք է անել սեքսի “խեղաթյուրման” դեմ պայքարելու համար, - հարցրեց մեկը:

Գ.ն ծիծաղեց:

- Ես հենց այդ հարցին էլ սպասում էի: Բայց դուք արդեն պետք է հասկանաք, որ այն հնարավոր չէ բացատրել մեկին, ով դեռ իր վրա աշխատանքը չի սկսել և դեռ չգիտի այն մեխանիզմը, թե ինչպես է աշխատում “սեքսի խեղաթյուրման մեքենան” և թե ինչ պետք է անել խեղաթյուրումից խուսափելու համար: Իր վրա աշխատանքը պետք է սկսվի նրանից, որ մարդ պետք է ստեղծի ձգողության մշտական կենտրոն: Երբ ձգողության մշտական կենտրոնը ստեղծված է, մնացած բոլոր կենտրոնները սկսում են դասավորվել և գործել իր ենթակայության տակ: Հարց է ծագում՝ ինչի՞ց և ինչպե՞ս է պետք մշտական ձգողության կենտրոնը ստեղծել: Այս հարցին կարելի է միայն պատասխանել, որ այն բացառապես կապված է մարդու՝ աշխատանքի, դպրոցի նկատմամբ վերաբերմունքով, աշխատանքը կարևորելու և ամեն ինչի մեխանիկական և անիմաստ լինելու գիտակցումը կօգնի նրան ստեղծել իր մեջ մշտական ձգողության կենտրոն:

Սեքսի կենտրոնի աշխատանքը շատ կարևոր է ընհանուր հավասարակշռություն և մշտական ձգողության կենտրոն ստեղծելու համար: Համաձայն իր էներգիայի, այսինքն՝ եթե այն օգտագործում է իր էներգիան, այն գտնվում է բարձրագույն էմոցիոնալ կենտրոնի մակարդակի վրա: Մնացած բոլոր կենտրոնները գնտվում են նրա ենթակայության տակ: Այդ պատճառով շատ կարևոր է, որ այն գործի իր էներգիայով: Միայն սա արդեն թույլ է տալիս ապրելու համեմատաբար ավելի բարձր մակարդակ: Եվ այս դեպքում, այսինքն՝ եթե սեքսի կենտրոնը գործում է իր սեփական էներգիայով և իր տեղում, մնացյալ բոլոր կենտրոնները նույնպես կարող են ճիշտ աշխատել իրենց տեղում և իրենց սեփական էներգիայով: